# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐ

*Հունվար–հունիս 2023*

# Ամփոփ նկարագիր

2022 թվականից ռուս-ուկրաինական պատերազմի արդյունքում շատ ռուսներ և ուկրաինացիներ տեղափոխվեցին Հայաստան՝ տեխոփոխելով նաև իրենց բիզնեսը, ինչը նպաստել է տնտեսական ակտիվության աճին:

2023 թվականի հունվար-հունիսին տնտեսական ակտիվության ցուցանիշն աճել է 11.4%-ով:

2023 թվականի հունիսին հայկական դրամը տարեսկզբից արժևորվել է մոտ 2.4%-ով:

2023 թվականի հունվար-հունիս նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատականը ցույց է տալիս, որ՝

- արտահանումն աճել է 72.8%–ով,
- ներմուծումն աճել է 73.0%-ով,
- զբոսաշրջիկների թվաքանակն աճել է 70.3%-ով,
– միջին աշխատավարձն աճել է 13.8%-ով,
– ծառայությունների ծավալն աճել է 16.8%–ով,
– առևտրի ծավալն աճել է 23.6%-ով:

Հայաստանում 2023 թվականի հունվար-հունիսին գնաճը կազմել է 4.2%:

# Հիմնական տնտեսական ցուցանիշներ

**Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշ**
2023թ. հունվար-հունիս, աճողական




**Գծապատկեր 2. Աճն ըստ ոլորտների**
2023 թ. հունիսը նախորդ տարվա հունիսի նկատմամբ, %




**Գծապատկեր 3. Աճն ըստ ոլորտների**
2023 թ. հունվար-հունիսը. նախորդ տարվա հունվար–հունիսի նկատմամբ,%




- **Տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ)** հունվար-մարտից հունվար-մայիս ժամանակահատվածում համեմատաբար կայուն է եղել: Կիսամյակի ընթացքում ՏԱՑ–ը գտնվել է 11.2%-ից 12.5% միջակայքում: 2023 թվականի հունվար-հունիսին հունվար–մարտի համեմատ արձանագրել է ավելի դանդաղ աճ՝ 11.4%:
- **Արդյունաբերություն**. Արդյունաբերական արտադրանքի ծավալը 2023 թվականի հունվար-հունիսին կազմել է 1,167,535 մլն դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 1.0%-ով: 2022 թվականի նույն ժ/շ համեմատ արդյունաբերության աճին առավելագույն նպաստում ունեցել է մշակող արդյունաբերությունը (2022թ. նույն ժ/շ նկատմամբ աճը կազմել է՝ 4.3%): Արդյունաբերության աճի վրա բացասաբար է ազդել հանքարդյունաբերությունը (կրճատումը -6.9% 2023թ. նույն ժամանակահատվածի համեմատ**):**
- **Շինարարություն.** Շինարարության արտադրանքը 2023 թվականի հունվար-հունիսին կազմել է 174,155.4 մլն դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 17.0%-ով: Շինարարության աճին հիմնականում նպաստել են կազմակերպությունների միջոցներով իրականացվա շինարարության 47.9% աճը:
- **Առևտուր.** Ներքին առևտրաշրջանառության ծավալը 2023 թվականի հունվար-հունիսին կազմել է 2,280,859,8 մլն դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 23.6%-ով: Ներքին առևտրի աճի հիմնական պատճառներից են 2022 և 2023 թվականների ընթացքում ռուսաստանցիների ներհոսքն է Հայաստան և զբոսաշրջության աճը:
- **Ծառայություններ.** Ծառայությունների շրջանառության ծավալը 2023 թվականի հունվար-հունիսին կազմել է 1,431,313,.1 մլն դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 16.8%-ով: Ծառայությունների շրջանառության կիսամյակային աճին նպաստող հիմնական ենթաճյուղերն են. տրանսպորտը (աճը՝ 34,5%՝), և տեղեկատվություն և կապ ( աճը՝ 56,8%): Ծառայության աճի վրա բացասաբար է ազդել ֆինանսական և ապահովագրական գործունեությունը (կրճատումը՝ -3.5%): Ծառայությունների ոլորտում բարձր աճը կարող է կապված լինել նաև 2023 թվականի առաջին կիսամյակի զբոսաշրջության աճի և ռուսաստանցիների ներհհոսքի հետ:

# Զբոսաշրջություն

**Գծապատկեր 4. Միջազգային զբոսաշրջիկների ժամանումներ**




- Հայաստանը 2023 թվականի հունվար–հունիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ զբոսաշրջիկների թվի զգալի աճ է գրանցել:
- 2023 թվականի հունվար-հունիսին զբոսաշրջիկների թիվը կազմել է 1,002.9 հազարի, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 70.3 տոկոսով:
- Զբոսաշրջիկների թվի աճի պատճառներից են.
  - ռուս-ուկրաինական պատերազմը,
  - հայկական սփյուռքի հոսքը:

**Գծապատկեր 5. Ռուսաստանից զբոսաշրջիկների թիվը**




- Ռուսաստանից ժամանած զբոսաշրջիկներին բաժին է ընկել զբոսաշրջիկների 51.7%-ը:
- Ելնելով զբոսաշրջիկների թվի աճից՝ ակնկալում ենք, որ ֆինասնական ներհոսքը նույնպես կավելանա մոտ 70%-ով, քանի որ թե՛ զբոսաշրջիկների և թե՛ նրանց կողմից իրականացված ծախսերը համաչափ են Հայաստանի համար:
- Նշենք նաև, որ Ռուսաստանի դեմ պատժամիջոցների և ռուս-ուկրաինական պատերազմի շարունակման հետևանքով 2023 թվականին Ռուսաստանից զբոսաշրջիկների թիվը հսկայական թռիչք է գրանցել: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ՌԴ-ից զբոսաշրջիկների թիվն աճել է 2.1 անգամ:

# Զբոսաշրջություն




518 հազար 5.6 հազար

## Ժամանումներ ըստ երկրների

Հունվար–հունիս 2023

1,002.9 հազար, 70.3% կիսամյակի աճը

| | |
|---|---|
| **Ռուսաստան** | 518.0 հազար, 2.1x S/S աճ |
| **Վրաստան** | 113.2 հազար, 80.0% S/S աճ |
| **Իրան** | 58.8 հազար, 22.1% S/S աճ |
| **ԱՄՆ** | 16.6 հազար, 27.6% S/S աճ |
| **Ուկրաինա** | 12.1 հազար, 57.7% S/S աճ |
| **Հնդկաստան** | 11.8 հազար, 95.3% S/S աճ |
| **Գերմանիա** | 9.9 հազար, 16.2% S/S աճ |
| **Ֆրանսիա** | 9.2 հազար, 19.9% S/S աճ |
| **Ֆիլիպիններ** | 8.8 հազար, 2.7x S/S աճ |
| **Բելառուս** | 8.0 հազար, 5.8% S/S աճ |
| **Թուրքիա** | 5.6 հազար, 67.9% S/S աճ |

# Միջազգային առևտուր. արտահանում

**Գծապատկեր 6. Ապրանքների արտահանում**
2023 թվականի հունվար-հունիս, միլիոն ԱՄՆ դոլար




**Գծապատկեր 7. Արտահանում ըստ ապրանքների**
2023թ. հունվար-հունիս, մլն ԱՄՆ դոլար




- **Արտահանման ծավալը** 2023 թվականի հունվար-հունիսին կազմել է 3266.6 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելանալով 1385.1 մլն ԱՄՆ դոլարով կամ 73.6%-ով:
- Արտահանման աճի հիմնական նպաստողներից մեկը ռուս-ուկրաինական պատերազմն է, քանի որ Ռուսաստանի դեմ պատժամիջոցները Հայաստանի համար նոր շուկաներ բացեցին արտահանման համար:
- **2023 թվականի հունվար-հունիսի աճին նպաստող հիմնական ապրանքները (տոկոս նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ).**
- **Մարդատար ավտոմեքենա՝** 299.4 մլն ԱՄՆ դոլար՝ աճը 286.6 մլն ԱՄՆ դոլար կամ 23.4 անգամ:
- **Անմշակ կամ կիսամշակված ոսկի, փոշի՝** 280.8 մլն ԱՄՆ դոլար, աճը 185.3 մլն ԱՄՆ դոլար կամ 2.9 անգամ:
- **Ադամանդի քար՝** 252.3 մլն ԱՄՆ դոլար՝ աճը 99.7 մլն ԱՄՆ դոլար կամ 65.3%:
- **Պղնձի հանքաքար, խտանյութ՝** 228.4 մլն ԱՄՆ դոլար, կրճատումը՝ 138.1 մլն ԱՄՆ դոլարով կամ -37.7%-ով:
- **Հեռախոսային և հեռագրական սարքավորումներ, մոդեմ, պահեստամասեր՝** 214.1 մլն ԱՄՆ դոլար, աճը 204.2 մլն ԱՄՆ դոլար կամ 21.7 անգամ:
- **Մետաղագործություն՝ 189.8 մլն ԱՄՆ դոլար՝** աճը 60 մլն ԱՄՆ դոլար կամ 46.2%-ով.
- **Ծխախոտ և սիգար՝ 172.1 մլն ԱՄՆ դոլար՝** աճը 29.8 մլն ԱՄՆ դոլար կամ 20.9%-ով:
- **Կոնյակ, ռոմ, ջին, օղի, լիկյոր՝** 127.5 մլն ԱՄՆ դոլար՝ աճը 27.6 մլն ԱՄՆ դոլար կամ 27.6%
- **Հեռուստացույց՝ 115.5 մլն ԱՄՆ դոլար՝** աճը 112.5 մլն ԱՄՆ դոլար կամ 37.7 անգամ
- **Մոլիբդենի հանքաքար, խտանյութ՝** 88.3 մլն ԱՄՆ դոլար՝ աճը 15.1 մլն ԱՄՆ դոլար կամ 20.7%:

# Միջազգային առևտուր. արտահանում

**Գծապատկեր 8. Արտահանման ծավալներն ըստ երկրների**
2023թ. հունվար-հունիս, մլն ԱՄՆ դոլար




**Պատկեր 9. Ապրանքների արտահանումն ըստ տեխնոլոգիական մակարդակի**
2023թ. հունվար-հունիս, մլն ԱՄՆ դոլար




- **Անմշակ կամ կիսամշակված պլատին, փոշի՝** 81.2 մլն ԱՄՆ դոլար, աճը 81.1 մլն ԱՄՆ դոլարով կամ 1503.8 անգամ:
- **Էլեկտրաէներգիա՝** 51.7 մլն ԱՄՆ դոլար՝ ավելանալով 4.6 մլն ԱՄՆ դոլար կամ 9.7%:
- **Ալյումինե փայլաթիթեղ** <0,2մմ՝ 49.3 մլն ԱՄՆ դոլար՝ կրճատվելով 16.7 մլն ԱՄՆ դոլարով կամ 25.3%-ով:
- Հիմնական արտահանող երկրներն են
- **Հիմնական առևտրային գործընկերն է Ռուսաստանը,** որին բաժին է ընկել 2023 թվականի հունվար-հունիսի ընդհանուր արտահանման 50.9%-ը՝ 1663.1 մլն ԱՄՆ դոլար: Աճը կազմել է 1135.0 մլն ԱՄՆ դոլար կամ 3.1 անգամ:
- **Այլ խոշոր գործընկեր երկրներ.**
- **ԱՄԷ.** 2023 թվականի հունվար-հունիսին արտահանումը կազմել է 466.0 մլն ԱՄՆ դոլար՝ աճը՝ 344.7 մլն ԱՄՆ դոլար կամ 3.8 անգամ:
- **Չինաստան.** արտահանումը կազմել է 206.5 մլն ԱՄՆ դոլար՝ աճը 30.6 մլն ԱՄՆ դոլար կամ 17.4%:
- **Նիդեռլանդներ.** արտահանումը կազմել է 170.7 մլն ԱՄՆ դոլար՝ աճը 53.6 մլն ԱՄՆ դոլար կամ 45.8%:

# Միջազգային առևտուր. ներմուծում

**Գծապատկեր 10. Ապրանքների ներմուծում**
2023թփ. հունվար-հունիս, մլն ԱՄՆ դոլար




**Գծապատկեր 11. Ներմուծում ըստ ապրանքների**
2023թ. հունվար-հունիս, մլն ԱՄՆ դոլար




- **Ներմուծման ծավալը** 2023 թվականի հունվար-հունվարին կազմել է 5633.1 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելանալով 2392.1 մլն ԱՄՆ դոլարով կամ 73.1%-ով:
- 2023 թվականի հունվար-հունվար ամիսների աճին նպաստող հիմնական ապրանքներն են (տոկոսները 2022 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ են).
- **Մարդատար ավտոմեքենա**՝ 768.5 մլն ԱՄՆ դոլար՝ աճը 635.5 մլն ԱՄՆ դոլար կամ 5.8 անգամ
- **Հեռախոսային և հեռագրական սարքավորումներ, մոդեմ, պահեստամասեր**՝ 331.1 մլն ԱՄՆ դոլար՝ աճը 271.2 մլն ԱՄՆ դոլար կամ 5.5 անգամ:
- **Բնական և հեղուկ գազ՝** 269.3 մլն ԱՄՆ դոլար, կրճատումը 27.5 ԱՄՆ մլն դոլար կամ -9.3%:
- **Ադամանդի քար՝** 256.1 մլն ԱՄՆ դոլար՝ աճը 107.1 մլն ԱՄՆդոլար կամ 0.7%:
- **Չմշակված կամ կիսամշակված ոսկի, փոշի**՝ 245.3 մլն ԱՄՆ դոլար, աճը 207.4 մլն ԱՄՆ դոլար կամ 6.5 անգամ:
- **Նավթ և նավթամթերք**՝ 227.9 մլն ԱՄՆ դոլար, կրճատումը 26,1 մլն դոլար կամ 10.3%:
- Հեռուստացույց՝ 122.7 մլն ԱՄՆ դոլար՝ աճը 107,2 մլն ԱՄՆ դոլար կամ 8.0 անգամ:
- **Ավտոմատ հաշվիչ մեքենաներ, բլոկներ**՝ 87.3 մլն ԱՄՆ դոլար, աճը 32.9 մլն ԱՄՆ դոլարով կամ 60.4%:
- **Դեղամիջոցներ**՝ 78.6 մլն ԱՄՆ դոլար, աճը 8.7 մլն ԱՄՆ դոլարով կամ 12.5%:
- **Չմշակված կամ կիսամշակված պլատին, փոշի**՝ 77.8 մլն ԱՄՆ դոլար, աճը 77.4 մլն ԱՄՆ դոլար կամ 188.9 անգամ:
- **Ինքնագնաց բուլդոզեր, գրեյդերներ և այլն**՝ 60.9 մլն ԱՄՆ դոլար՝ աճը 21.2 մլն ԱՄՆ դոլար կամ 53.5%-ով:
- **Շարժիչային տրանսպորտային միջոցներ**՝ 58.5 մլն ԱՄՆ դոլար՝ աճը 35.1 մլն ԱՄՆ դոլարով կամ 2.5 անգամ:
- **Տրակտոր՝** 50.5 մլն ԱՄՆ դոլար՝ աճը 34,0 մլն ԱՄՆ դոլարով կամ 3.1 անգամ:

# Միջազգային առևտուր. ներմուծում

**Գծապատկեր 12. Ներմուծման ծավալի ըստ երկրների**
2023թ. հունվար-հունիս, մլն ԱՄՆ դոլար

**Աղյուսակ 1. Ներմուծում ԲԵՀ-ով**
2023թ. հունվար-հունիս, մլն ԱՄՆ դոլար

| | Ներմուծում | Տարեկան աճ | |
|---|---|---|---|
| | մլն ԱՄՆ դոլար | մլն ԱՄՆ դոլար | % |
| **Ընդամենը** | **5633.1** | **2392.1** | **73.1** |
| **Կապիտալ ապրանքներ** | 1033.1 | 564.1 | 120.3 |
| **Միջանկյալ ապրանքներ** | 2564.4 | 878.2 | 52.1 |
| **Սպառողական ապրանքներ** | 2035.6 | 919.8 | 82.4 |
| | **Ներմուծման կառուցվածքը** | | **Աճի կառուցվածքը** |
| | % | | |
| **Ընդամենը** | **100.0** | | **100.0** |
| **Կապիտալ ապրանքներ** | **18.3** | | **23.9** |
| **Միջանկյալ ապրանքներ** | **45.5** | | **37.2** |
| **Սպառողական ապրանքներ** | **36.1** | | **38.9** |

- 2023 թվականի հունվար-հունիսին հիմնական առևտրային գործընկեր Ռուսաստանին բաժին է ընկել ներմուծման ընդհանուր ծավալի 26.0%-ը՝ կազմելով 1,465.5 մլն ԱՄՆ դոլար: Վերջինս 2022թ. նույն ժամանակահատվածի համեմատ աելացել է 316,8 մլն ԱՄՆ դոլարով կամ 27.6 տոկոսով:
- Այլ խոշոր գործընկեր երկրներ.
  - ԱՄՆ. Ներմուծումը 2023 թվականի հունվար-հունիսին կազմել է 484.8 միլիոն ԱՄՆ դոլար՝ աճը 350.2 միլիոն ԱՄՆ դոլար կամ 3.6 անգամ:
  - Վրաստան. Ներմուծումը կազմել է 480.9 մլն ԱՄՆ դոլար՝ աճը 231.7 մլն ԱՄՆ դոլար կամ 93.0%:
  - Չինաստան. ներմուծումը կազմել է 413.7 մլն ԱՄՆ դոլար՝ աճը 108.8 մլն ԱՄՆ դոլար կամ 35.7%:

- Ըստ «Ապրանքների լայն տնտեսական դասակարգման» (ԲԵՀ)՝ աճը մեծապես պայմանավորված է Միջանկյալ ապրանքների ծավալների ավելացմամբ, որոնք կազմում են ներմուծման ընդհանուր ծավալների 45.5%-ը:
- Սպառողական ապրանքների ներմուծումը կազմել է 2,035.6 մլն ԱՄՆ դոլար՝ աճը 919.8 մլն ԱՄՆ դոլար կամ 82.4%: Աճը հիմնականում պայմանավորված է ներքին պահանջարկի ակտիվացմամբ:
- Ներմուծման աճի ամենաբարձր տեմպերն ունեցել են կապիտալ ապրանքները:
- Միջանկյալ ապրանքների ներմուծումը կազմել է 2,564.4 մլն ԱՄՆ դոլար, աճը 878.2 մլն ԱՄՆ դոլար կամ 52.1%:
- Կապիտալ ապրանքների ներմուծումը կազմել է 1,033.1 մլն ԱՄՆ դոլար՝ աճը 564,1 մլն ԱՄՆ դոլար կամ 2.2 անգամ:

# Աշխատանքի շուկա. զբաղվածություն

**Գծապատկեր 13. Ֆորմալ զբաղվածություն,**
հազար մարդ




- Ֆորմալ զբաղվածների թվաքանակ 2023 թվականի հունիսին կազմել է 719.3 հազար մարդ՝ 2022 թվականի հունիսի համեմատ աճելով 38.2 հազարով կամ 5.6 տոկոսով:
- Առևտրի, կրթության և մշակող արդյունաբերության ոլորտները 2023 թվականի հունիսի ունեն ամենաբարձր ցուցանիշները:
- Տեղեկատվության և կապի ոլորտի ֆորմալ աշխատողները 2023 թվականի հունիսին կազմել են 44.7 հազարի՝ նախորդ տարվա հունիսի համեմատ աճը կազմել է 9%:
- 2022 թվականի հունիսի համեմատ «Առևտրի» և «Ծառայությունների»-ոլորտներում գրանցվել է համապատասխանաբար 0.9%-ով և 2.0%-կրճատում:
- Ամենաբարձր աճը գրանցվել է «Մշակույթ, զվարճություններ և հանգիստ» ծառայության տեսակի գծով՝ 30.4%:
- Ռուս-ուկրաինական հակամարտությունը հանգեցրել է դեպի Հայաստան զբոսաշրջիկների/ներգաղթյալների հոսքի ավելացմանը, ինչը մեծացրել է «Կացության և հանրային սննդի կազմակերպում» ծառայությունների պահանջարկը:
- Պատերազմի պատճառով Հայաստան է ժամանել նաև աշխատուժի նոր խմբաքանակ: Սկսելով բիզնես կամ աշխատանք գտնելով Հայաստանում՝ նրանք նպաստել են բազմաթիվ ոլորտների, հատկապես SS ոլորտի աճին:

**Գծապատկեր 14. Ֆորմալ զբաղվածություն (ըստ ոլորտի),**
Հազար մարդ



# Աշխատանքի շուկա. աշխատավարձ

**Գծապատկեր 15. Աշխատավարձ**
Ըստ ոլորտների, ՀՀ դրամ




**Պատկեր 16. Աշխատավարձի աճ, %**
Ըստ ոլորտների




- Միջին ամսական աշխատավարձը 2023 թվականի հունիսին կազմել է 267,700 դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 13.8%-ով: Որից.
- **Գյուղատնտեսություն**: Միջին աշխատավարձը կազմել է 165,168 դրամ միջին աշխատավարձ, աճը՝ 20.6%:
- **Մշակող արդյունաբերություն**: Միջին աշխատավարձը կազմել է 210,329 դրամ աճը 13.2%:
- **Շինարարություն**: Միջին աշխատավարձը կազմել է 251,750 դրամ աճը 10.3%:
- **Մեծածախ և մանրածախ առևտուր**: Միջին աշխատավարձը կազմել է 191,257 դրամ աճը՝ 19.1%:
- **Տեղեկատվություն և հեռահաղորդակցություն.** Միջին աշխատավարձը կազմել է 822,170 դրամ աճը՝ 12.2%:
- **Ֆինանսական և ապահովագրական գործունեություն:** Միջին աշխատավարձը կազմել է 605,771 դրամ, աճը 20.4%:
- **Մասնագիտական, գիտատեխնիկական գործունեություն:** Միջին աշխատավարձը կազմել է դիտվել է 271, 306 դրամ աճը 19.0%.
- **Պետական կառավարում և պաշտպանություն; Պարտադիր սոցիալական ապահովություն:** Միջին աշխատավարձը կազմել է 366,594 դրամ աճը՝ 20.9%:
- **Կրթություն:** Միջին աշխատավարձը կազմել է 143,701 աճը 6.3%:
- **Առողջության և սոցիալական սպասարկում**: Միջին աշխատավարձը կազմել է 228,039 դրամ աճը 7.8%.
- **Մշակույթ, զվարճություններ և հանգիստ**: Միջին աշխատավարձը կազմել է 284,554 դրամ աճը 48.4%:

# Դրամական փոխանցումներ և փոխարժեք

**Գծապատկեր 17. Դրամական փոխանցումների ներհոսք**
Մլն ԱՄՆ դոլար




**Գծապատկեր 18. Դրամական փոխանցումներ և ԱՄՆ դոլար-ՀՀ դրամ հարաբերակցություն**




**Գծապատկեր 19. ԱՄՆ-ի և Ռուսաստանի ՀՆԱ-ի աճի կանխատեսումները**




- 2023 թվականի հունվար-հունիսին դրամական փոխանցումների ընդհանուր ներհոսքի ծավալը կազմել է 2,925.1 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 56.4%-ով:
- Դրամական փոխանցումների մեծ մասը ստացվել է Ռուսաստանից, որին բաժին է ընկնում տրանսֆերտների մոտավորապես 72.9%-ը: 2023 թվականի հունվար-հունիսին Ռուսաստանից ներհոսքը կազմել է 2,131.9 մլն ԱՄՆ դոլար՝ աճելով 88.4%-ով:
- Տրանսֆերտների 10,6%-ը կազմել է ԱՄՆ-ից ստացված փոխանցումները: 2023 թվականի հունվար-հունիսին այն կազմել է 309.0 մլն ԱՄՆ դոլար՝ կրճատվելով 3.1%-ով:
- 2023 թվականի հունվար-հունիսին զուտ ներհոսքը կազմել է 897.6 մլն ԱՄՆ դոլար՝ կրճատվելով 9.7%-ով:
- Ռուս–ուկրաինական հակամարտությունից հետո տրանսֆերտների հոսքը և զուտ ներհոսքը զգալիորեն ավելացել է, ինչը նշանակում է, որ թեև կա շոկային գործոն, այուամենայնիվ տրանսֆերտները չեն նվազում անգամ այն դեպքում, եթե բացառենք պատերազմի հետևանքները:
- Դրամական փոխանցումների ներհոսքը և դրամի փոխարժեքը սովորաբար բացասաբար են փոխկապակցված, սակայն ռուս-ուկրաինական պատերազմից հետո տրանսֆերտների ներհոսքի տատանումները աճել են, ավելին, 2023 թվականին ակնհայտ բացասական հարաբերակցությունը կորցրել է իր օրինաչափությունը:
- ԱՄՀ-ի տնտեսական հեռանկարների համաձայն՝ 2023 թվականին Ռուսաստանը և ԱՄՆ-ը կունենան համապատասխանաբար 1.5% և 1.8% տնտեսական աճ, իսկ 2024թ. համապատասխանաբար 1.3% և 1.0%:
- Ռուսաստանում ՀՆԱ-ի դանդաղ աճը չի ազդել ՌԴ-ից տրանսֆերտների տեմպերի վրա, սակայն ԱՄՆ-ի դանդաղ աճը սկսել է իր ազդեցությունը դրսևորել տրանսֆերտների վրա, քանի որ 2023 թվականի հունվար-հունիս ամիսներին նկատելի է ԱՄՆ–ից դրամական փոխանցումների կրճատում:

# ՍԳԻ - Հայաստան և մնացած աշխարհը

**Գծապատկեր 20. Գնաճի մակարդակ Աշխարհ, Հայաստան 2023թ. հունիսի դրությամբ, %**




**Գծապատկեր 21. Գնաճի մակարդակ**
սպառողական գների միջին ժամանակահատվածի փոփոխությունը տոկոսներով




- Ողջ աշխարհում գնաճը շարունակում է մնալ մեծ մտահոգություն:
- 2023 թվականի երկրորդ եռամսյակում Հայաստանում գնաճը կտրուկ նվազման տեմպեր է ունեցել, իսկ 2023 թվականի հունիսին Հայաստանի գները թեւակոխել են գնանկման փուլ:
- 2023 թվականի հունիսի դրությամբ համաշխարհային գնաճը մնում է մտահոգիչ և աճող գործոն: Ընթացիկ տվյալների համաձայն՝ 154 երկրների միջին համաշխարհային գնաճը 2023 թվականի հունիսի ամիսներին կազմում է մոտավորապես 13.8%: Սա նշանակում է, որ գրեթե բոլոր երկրները տուժել են գնաճի աճից:
- Հայաստանի գնաճը, ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի, 2023 թվականի հունիսին կազմել է -0.5 տոկոս:
- Գծապատկեր 21-ից կարելի է նկատել, որ Հայաստանը տարածաշրջանում միակ երկիրն է, որը գտնվում է գնանկման փուլում:
- Թեև գնանկումը նույնպես մտահոգիչ գործոն է տնտեսության համար, սակայն գնանկման փոքր տեմպերն այնքան էլ մեծ խնդիր չէ Հայաստանի համար:
- Երբ Հայաստանը թեւակոխեց գնանկման փուլ, Հայաստանի Կենտրոնական բանկը երկրորդ եռամսյակում մեկ անգամ նվազեցրեց տոկոսադրույքը: Այնուամենայնիվ, ակնկալում ենք, որ մինչև տարեվերջ ևս մի քանի անգամ կնվազեցվի վերաֆինանսավորման տոկոսադրույքը, քանի որ դեռևս առկա էգնաճի մտահոգություն, իսկ ՍԳԻ ներկայիս ցուցանիշը ցածր է ԿԲ-ի թիրախից:

# Հայաստանում գների ինդեքսները

**Գծապատկեր 22. Սպառողական գների ինդեքսի դինամիկան Հայաստանում, %**




**Գծապատկեր 23. Գնային ինդեքսների դինամիկան Հայաստանում, %**




- Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի 2023 թվականի հունիսին սպառողական գների ինդեքսը կազմել է -0.5%, իսկ 2023 թվականի հունվար-հունիսին՝ 4.2%:
- 2023 թվականի հունվար-հունիսին Հայաստանի գների ինդեքսների մեծ մասը հարաբերականորեն կայուն է եղել, բացառությամբ արտահանման գների ինդեքսի, որը 2023 թվականի հունվար-ապրիլի 0.7%-ից հասել է 14.1%-ի:
- 2023թ. գների նման աճը պայմանավորված է հայկական դրամի մյուս առևտրային երկրների արժույթների նկատմամբ հայկական դրամի արժևորումն է:
- Հայաստանի ներմուծման գների ինդեքսը 2023թ.-ի առաջին եռամսյակի ընթացքում բացասական է եղել, իսկ 2023թ.-ի հունվար-մարտից սկած արդյունաբերողների գների ինդեքսը (ԱԳԻ) նույնպես բացասական տեմպեր է գրանցել և 2023թ.-ի հունվար-հունիսին հասել է -1.0%-ի:
- 2023 թվականի հունիսի դրությամբ ՍԳԻ-ի դանդաղումը դեռ արագանում է՝ տարեսկզբից այն 8.1%-ից հասել է -0.5%-ի: Ըստ ԿԲ-ի կանխատեսումների՝ 2023 թվականի վերջին գնաճը կհասնի 0.4%-ի, ինչը դեռևս նպատակայինից ցածր է.

# Հայաստանում գների ինդեքսները

**Գծապատկեր 24. 5 հիմնական կշիռները ՍԳԻ զամբյուղում, 2023 հունվար–հունիս**




**Պատկեր 25. Լավագույն 4 երկրները, որոնք նպաստում են սպառողական գների ինդեքսին**




- Հայաստանի ՍԳԻ զամբյուղը կազմված է տասներկու հիմնական կատեգորիաներից, որոնցից յուրաքանչյուրը կշռված է ըստ սպառողների կարիքների և առաջնահերթությունների:
- Տասներկու կատեգորիաներն են՝ 1) սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ, 2) անշարժ գույք, ջուր, էլեկտրականություն, գազ և այլ վառելիքներ, 3) առողջապահություն, 4) տրանսպորտ, 5) ալկոհոլային խմիչքներ, 6) հագուստ և կոշիկ, 7) կապ, 8) կահավորանք, կենցաղային տեխնիկա, 9) հանգիստ և մշակույթ, 10) կրթություն, 11) ռեստորաններ և հյուրանոցներ և 12) տարբեր ապրանքներ և ծառայություններ:
- Տեսակարար կշռով ամենաբարձր կշիռ ունեն անշարժ գույքը և սննդամթերքը:
- 2023 թվականի հունվար-մարտ ժամանակահատվածում ՍԳԻ-ի վրա «Սննդամթերքն»-ն ունեցել է ամենաբարձր կշռված գնաճային ազդեցությունը: Այն կազմել է մոտավորապես 1.2 տոկոսային կետ՝ աճողական 4.2 գնաճի ցուցանիշի պարագայում:

# Հայաստանի պարտքն ու բյուջեն

**Պատկեր 26. Հայաստանի պետական պարտքը,**
միլիոն ԱՄՆ դոլար




**Պատկեր 27. ՀՀ բյուջեի եկամուտները և ծախսերը,**
մլն դրամ




- Հայաստանի ընդհանուր պարտքը 2023 թվականի հունիսին կազմել է 11,103.9 մլն ԱՄՆ դոլար:
- Վերոնշյալից 6,438,1 մլն դոլարը արտաքին պարտքն է, ինչը 2022 թվականի հունիսի համեմատ նվազել է մոտավորապես 0.9%-ով, իսկ մյուս մասը ներքին պարտքն է, ինչն աճել է մոտ 35.8%-ով:
- Արտաքին պարտքը կազմված է երկու մասից՝ ՀՀ կառավարության պարտք, որը կազմում է մոտավորապես 91.5% և 2022 թվականի հունիսի համեմատ նվազել է 1.0%-ով, և ՀՀ կենտրոնական բանկի պարտք, որը կազմում է մոտ 8.5%, ինչը 2022 թվականի հունիսի համեմատ աճել է 0.5%-ով:
- 2023 թվականի հունվար-հունիսին Հայաստանի բյուջեի եկամուտները կազմել են 1,161,070,1 մլն դրամ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 18.1%-ով:
- Վերջինիս պայմանավորված է հարկերի և տուրքերի եկամուտների մոտ 19.0% աճով՝ ինչը կազմել է 1,103,898.6 մլն դրամ:
- Կառավարության ծախսերը 2023 թվականի հունվար-հունիսին աճել են մոտավորապես 12.7%-ով՝ կազմելով 1,026,389.7 մլն դրամ:
- Պետական ծախսերը բաժանվում են ընթացիկ ծախսերի և ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառույթների:
- Ընթացիկ ծախսերն աճել են 12.1%-ով, ինչը ներառում է պետական հատվածի աշխատողների աշխատավարձերը, ապրանքների և ծառայությունների ձեռքբերումը, տոկոսավճարները, դրամաշնորհները և այլն:
- Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառույթների ծավալը 2022 թվականի հունվար-հունիսի համեմատ աճել ՝ 18.0%-ով: